ԵԴ2/25965/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 օգոստոսի 2023թ. **ք.Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանս /այսուհետ՝ դատարան/, ծանոթանալով <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետարանի 26.07.2023թ. կայացված 2202-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Ֆոտոն>> ՍՊ ընկերության տնօրեն Նելլի Պետրոսյանը 2023թ. օգոստոսի 17-ին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետարանի 26.07.2023թ. կայացված 2202-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ. օգոստոսի 22-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200 և 361 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետարանի 26.07.2023թ. կայացված 2202-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YESOYAN YEREM 2711740048 Date: 2023.08.24 **ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ**